

Յոգե-բարոյական Գարգեր

# ԽՂՃԻՆ ԶԱՅՆԸ...

«Ասացիք՝ մարդու խիղճը պետք է իր քննիչը լինի՝ հարցաքննի... Այ՛, նոր յանցագործություններ չեն լինի, մարդիկ կը լինեն կատարեալ, արդար, բարի»:

Յովհաննես Մելգոնեան «հարցաքննություն» վիպակն

Յոգե-բարոյական արժեքներու անկումը ակներե է մեր ժամանակներու խորապատկերին վրայ: Հաւաքական թէ անհատական գետնի վրայ խղճին ձայնը լուծած է... կամ լռեցուցած են: Անարդարութիւններ, ամբողջականութիւններ, ահաբեկութիւններ, ոճիրներ, խարդախութիւններ արարելու, ստայոյ լեզուագործութիւններ, շահագործումներ եւ գեղծարարութիւններ կեանքի ընթացիկ բարքերուն մէջ մտած են...: Բնական երեւոյթներ դարձած են ընկերութեան համար: Որքան ընդհանրական այլատեսած այս բարքերը, մարդկային կեանքէն ներս, այդքան մարդը կը հեռացնեն խղճի ձայնէն, որ մարդու բարոյական կերպարին էտարրն է: Մարդու ներքին ամբակում կառոյցը: Այդ կառոյցին վրայ բարձրացած հոգեկան խարխիւներն են, որ անխախտ, անյաղթ են ամբակում կը պահեն մարդը իր կեցուցումներուն, իր վերաբերումներուն, իր արարքներուն, իր որոշումներուն մէջ թէ փոխարարութիւններուն ընթացքին՝ խղճին առաջնորդութեամբ կամ անոր ձայնին անսալով...:

Անհատական թէ հաւաքական տարողութեամբ չարն ու չարիքը խղճի բացակայութեամբ կը գործեն: Երբ խիղճը բացակայ է մարդուն ներքին կազմուածքէն պատասխանատուութեն գերծ հոգիով կը չարասուէ, կը նեղափոխի, կը ստէ, կը խարդախէ, ճշմարտութեան դէմ կը մեղանչէ, կը դաւէ: Խղճին ձայնն է մարդու բարոյական հսկիչը: Այդ ձայնն է, որ քաղաքագետը եւ պետական գործիչը կը պահէ իր պատասխանատուութեան գիտակցութեան վրայ հանրավճարն է հայրենասիրտ արարքներէ հեռու մնալու խղճմտութեամբ: Իր անձնական շահերէն, իշխանատեւեցական, նիւթապաշտական, փառամոլական, գերադաս Նկատելու հաւաքականը, ընդհանրականը, հանրայինը, պետականը: Խղճի տեր մարդոցմով կը պահուի ընկերութեան, հայրենիքի եւ պետականութեան բարոյականութիւնը: Բարոյական պարտքի գիտակցութեամբ է, որ մարդ էակը իր արարքները կը գործէ, կը վերհսկէ անոնց վրայ, վերատեսութեան կ'ենթարկէ զանոնք, խիղճը հաշուեցնութեան կը կանչէ: Որքան ճիշդ բնորոշած է փիլիսոփայ Զանթը. «խիղճը գործնական բանականութիւնն է, որը կը պարտադրէ մարդուն գնահատել իր արարքները ըստ բարոյական պարտքի: Գոյութիւն ունի երկու հրաշք. աստղերու անեզր աշխարհը մեր վրայ եւ խղճի ձայնը մեր ներքո: Թէ մէկը եւ թէ միւսը Աստուծոյ ձայնն է, ճիշդ է անապացուցելի, բայց կանխագագուող»:

Ոչ փիլիսոփաները եւ ոչ ալ խղճմտանքի տեր արուեստագետներն են, որ մեզ կը կառավարեն: Հաշիւի եւ շահի ծառայողներն են առհասարակ ղեկին զըլուխը գտնուողները, որոնք դժբախտաբար իրենց խնկարկու, ծառայամիտ եւ պատեհապաշտ ամբոխներու նեցուկը կը վայելեն...: Յոգե-բարոյական մթնոլորտի չքացումով ժողովուրդը ամբոխի վերածուելով սակարկութեամբ կը վաճառէ խիղճը, բարոյականութիւն, սկզբունքը եւ ամեն ընդհանրական շահի եւ սրբութիւն: Ու նուիրական շատ ուրիշ բաներ...:

Խղճմտանքի տեր մարդկայնասերները պատերազմի եւ ամեն կարգի սպանութիւններու դէմ կը ցցուին, կը ծառանան ու կը պայքարին: Պատերազմը, որովհետեւ, անխղճութեան ամենն ահաւոր ահագնացումն է, մարդը անասնացող տարրուութեամբ: Խղճին ձայնը ոչ միայն կը լռէ, այլեւ՝ ամբողջութեամբ կ'անհետանայ, մարդը մարդուն դէմ գազան դարձնելով...: Յոյն բանաստեղծ Յեսիոս (Ք.Ա. 8-7 դար) մարդու բարոյական ամենէն մեծ հարստութիւնը, գանձը կը նկատէ խիղճը. «Աստուած թոյլ տուաւ կենդանիներուն լափել իրարու, իսկ մարդուն բաժին հանեց խիղճը՝ գանձերէն ամենաթանկարժէք գանձը»: Կենդանիները այսօր իրարու կը լափեն թէ ոչ, չեն գիտեր, զուցէ անելի ընթացակարգութեամբ են, բայց մարդիկ կորսնցնելով իրենց ամենաթանկարժէք գանձը՝ խիղճը կը լափեն իրարու...: Խիղճը պարպուած ոճրագործ ձեռքեր, հետեւելով ինչ-ինչ դաւադիր ծրագիրներու իրականացման, ահաբեկչական արարքներու կը դիմեն, հաւաքական սպանդներ կը կազմակերպեն, անմեղներ կը խլեն կեանքէն...: Խիղճը արեան մէջ կը խեղդեն...: Խիղճը ճապարհիքն դուրս գալով՝ իր ձայնը կը բարձրացնէ խաղաղութեան մէջ: Կիրքը, ատելութիւն

նը եւ թշնամանքը սանձագերծ եւ մակընթաց ակերծումով խիղճը կը դատապարտեն լուրութեան: Ահաբեկումի եւ բռնարարներու վախը եւս խիղճը կը պահէ արգելափակուած: Պոռթկացող խիղճերը, որոնք բանականութեան եւ հոգիի տեր մարդոց աղաղակող անկաշկանդ ճիշտներն են, կ'ենթարկուին հալածանքի, ճշումի, ազատագրումի կամ ուղղակի ոչնչացման...: Ոչնչացումը խղճի ազատութեան ոտնահարումն է...:

Խիղճը արթուն պահելու կոչուած, սիրոյ, համբաշխութեան, հանդուրժողութեան, խաղաղ զոյակցութեան, կրօնական մշակոյթներու երկխօսութեան ջատագով կրօնը իր արմատական բեւեռացումներու ծայրայեղականութեամբ թատերաբեմ կը դառնայ կոյր մոլեռանդութեան, որուն դրսեւորումով խիղճն ու բանականութիւնը տեղի կու տան ատելութեան մագլցումին առջեւ: Որեւէ ընկերային ողջմիտ եւ յառաջադէմ մտածողութեան համար անընդունելի եւ յետադէմ հոսանք է կրօնական արմատականութիւնը, որուն յառաջաքայլերը անձկութեամբ համակած են մարդկութեան ողջմիտ, լայնախոհ եւ այլ կրօնադաւան շրջանակները: Սիոնիստներու առնչութիւնը: Երկու սպառնացող վտանգներ աշխարհի համար:

Կրօնա-փիլիսոփայական իր իմաստէն անկախաբար խիղճին ձայնը թէ լուծած է կեանքի առօրեային մէջ եւս կը զգացնէ իր գոյութիւնը, գոյութեան բարոյականութիւնը պահելով: Խղճին ձայնը չի կրնար, - անհատական թէ հաւաքական գետնի վրայ, - անտեսել Ստագործուած վաստակի մը արժէքը: Իտալացիահատէլ ձեռք ձգուած աշխատանքի մը արդիւնքը: Ապերախութեան դրսեւորումները խղճի բացակայութեան բացայայտ նշաններն են, որոնք կ'առաջնորդեն ուրացման եւ անտարբերութեան: Բարոյական հիւանդուութեամբ տառապող որքան մարդիկ անխղճաբար կը շրջեն իրականութիւնները, կը քարկոծեն բարիին սերմացանները, կ'աղարտեն գեղեցիկը, կը ծաղրեն ազնիւն եւ կը հալածեն պարկեշտը: Խղճին ներկայութիւնը ազնիւին, արդարին, պարկեշտին ու բարիին յաղթանակն է: Աշխարհին ու մարդկային փոխ յարաբերութիւններուն քաղցրութիւնը բերող բարոյական ուժն է, որ կը դիմադրէ բոլոր փորձութիւններուն: Խաղաղ է ներաշխարհը այն մարդուն, որուն խիղճը հանդարտ է, եւ խաղճած չի իր յանցագործ արարքներուն հետեւանքով...:

Խիղճին ձայնը արդարութեան ձայնի հետ հաշտ կ'ընթանայ: Արդարը խղճին ձայնին անստացողն է, որ չ'ազդուիր շրջանակի նենգութիւններէն, խարդախութիւններէն եւ չի դադիր ճշմարտութեան ծառայել: Ծժարտութիւնը արդարութեան դուռը բացող լոյսն է, որ խիղճէն կը ցայտէ աստուածային ներգործութեամբ: Բոլոր անարդարութիւններուն իմաստապատճառը խիղճը լռեցնելու չարակամութիւնն է, որ միայն անհատական գետնի վրայ չի գործուիր, այլ՝ արդարութեան դատապարտական ատեաններէն ներս պետական կամ եկեղեցական-համայնքային...: Հովանաւորութիւններ եւ նիւթական կաշառքներ որքան անխղճութիւններ կը գործեն դժբախտութեան գոհեր պատճառելով: Անիրաւը իր մեղագործութիւններէն եւ յանցագործութիւններէն անպարտ արձակելով...:

Ընկերային գետնի վրայ եւս գործատերին կողմէ շահագործումի եւ ճշումի բոլոր ի գործ դրուած միջոցները, անյարգուող շահածարարութիւնները անմարդկայնութեան եւ անխղճութեան արտայայտութիւններ են, որոնք աշխատարու գանգուածներուն պատուհասը կը կազմեն: Վաշխառուներն ալ ուրիշ դասակարգ մըն են, որոնք դրամին պաշտամունքով կը շահագործեն տնտեսական կարօտութեան եւ տկարութեան մէջ գտնուողները: Գործի մէջ ձախողածները...:

Ժառանգներու խտրական բաժանումներու եւ անխիղճ վերաբերումներու պատճառով որքան ընտանիքներ պառակտուած են սիրոյ եւ համբաշխութեան բոյները դժոխքի վերածելով, ընտանիքի անդամներուն մէկը միւսին դէմ թշնամացնելով...:

Ըստ կրօնական եւ մարդկայնապաշտ փիլիսոփայութիւններու մարդուն վերապահուած է ձգտումը բարոյական-հոգեկան կատարելութեան հասնելուն:

Խղճմտանքի ձայնով մարդ կը հասնի բարիին եւ արդարին: Կը մնայ, որ այդ ձայնը տեւաբար մարդուն մէջ արթուն քնակելով հարցաքննիչի դերը կատարէ աստուածավայնութեամբ...:

ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱԸ  
18 Մարտ, 2008

Շարունակուած Ա. Էջէն

## «ԱՄՈ՛Ր ՊԱՐԵՑԵՔ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ»

Երկրորդ, պատասխանատու վերաբերում ունենալ ազատութեան նկատմամբ: Մարդու տրուած ազատութիւնը սահմանափակ է: Բացարձակ ազատութիւնը կը դառնայ աղբիւր բռնութեան ու անխիչասիրութեան: Ազատութիւնը պետք է գործածել պատասխանատուութեամբ եւ ո՛չ թէ քմահաճ կերպով, հաւաքական շահերու եւ ո՛չ թէ անձնական նպատակներու: Անձնակեդրոն ազատութիւնը միայն չարիք կը յառաջացնէ:

Երրորդ՝ համարատու ըլլալ ուրիշին նկատմամբ: Ծժարիտ ազատութիւնը կը մերժէ ինքնակեդրոն ինքնաբաւ մտեցում: Ան համարատուութեան վրայ խարսխուած փոխ-յարաբերութիւն ու համագործակցութիւն կ'ենթադրէ: Համարատուութիւնը միակողմանի կ'անհանչ չէ, այլ երկկողմանի պարտաւորութիւն: Համարատուութիւնը աղբիւր է վստահութեան ու ամուր կրօնանը ազատութեան:

Ազատութեան այս կերպ ըմբռնումը ու իրագործումը ընկերութիւնը կ'առաջնորդէ դէպի իրաւ ու ամբողջական արդարութիւն ու խաղաղութիւն: Այլապէս, ազատութիւնը կը շահագործուի անձնակեդրոն նպատակներու՝ պատճառ դառնալով բարոյական արժէքներու նահանջին ու ընկերային չարիքներու յառաջացման:

Յորրորդ՝ յետոյ թէ ազատութիւնը ամուր պահեցէ, Առաքեալը կը գովուցնէ մեզ ըսելով՝ «Վերստին ստրկութեան լուծին տակ մի՛ մտնէք»: Ստրկութեան լուծին տակ մտնելը, դարձեալ Առաքեալին բառերով, մասնակից դառնալ է «խաւարին գործերուն» (Եփ. 5:11): Ու որքա՛ն այլազան են ու բազմազան եւ մասնաւոր սարսափազդող՝ մարդը անմարդկայնացնող ու Աստուծէ հեռացնող «խաւարի գործերը»...:

Քրիստոսի յարութեամբ իրագործուած մարդու ազատագրութեան տոնի այս օրերուն, մեր հայեացքը դարձեալ կ'ողողենք մեր հայրենիքի:

Մտահոգ է հայ ժողովուրդը, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, ի տես Հայաստանի մէջ վերջին շրջանին պարուած ողբերգական տեսարաններուն:

Ընդվզած է հայ ժողովուրդը ի տես հայրենիքը ու ազգը ինքնաքանդումի առաջնորդող երեւոյթներուն:

Կարելի չէ անտարբեր մնալ նման կացութիւններու դիմաց: Հայաստանը ամբողջ հայութեան հայրենիքն է: Ինչպէս մեր ժողովուրդի հայրենաբնակ գաւակները, նոյնպէ՛ս պայմաններու պարտադրանքով աշխարհի բոլոր անկիւնները ցրուած մեր ժողովուրդին գաւակները պարտաւորութիւններ ու իրաւունքներ ունին հայրենիքին նկատմամբ: Այս գիտակցութեանն ու յանձնառութեանն մղուած՝

Սփիւռքի հայը գործնապէս կը մասնակցի հայրենաշինութեան՝ միաժամանակ ընդվզելով հայրենաքանդումի որեւէ փորձի դէմ:

Կը գուրգուրայ Հայաստանի անկախութեան՝ միաժամանակ գզուշացնելով հայրենաբնակ հայութիւնը հեռու մնալու այնպիսի գործնաբացներէն, որոնք կըրնան վտանգել Հայաստանի անկախութիւնը:

Կառչած կը մնայ ազատութեան նուիրական արժէքին՝ վերաբերում ճշդելով այն բոլոր փորձերուն նկատմամբ, որոնք ազատութեան չարաշահումով կրնան նահանջի մատնել ժողովուրդավարութեան լիարժէք կենսագործումը:

Նախանձախնդիր կը մնայ Հայաստանի պետականութեան ամբալնման նկատմամբ՝ ընտանապետական կեցուածք ճշդելով այն բոլոր գործնաբացներուն գծով, որոնք ընկերային, քաղաքական ու տնտեսական անհաւասարութիւն ու անկայունութիւն կը յառաջացնեն եւ Հայաստանը կ'առաջնորդեն դէպի անորոշութիւն:

Պարտաւորութեան ու իրաւունքի գիտակցութեամբ եւ նախանձախնդրութեամբ գազանակուած Սփիւռքի մտեցումը հայրենիքին նկատմամբ, միշտ պետք է ըլլայ իրապաշտ՝ հեռու ամեն ինչ վարդազոյն տեսնելու, ամեն բանի ժողովուրդի հայրենափորձութեամբ մօտեցնելու եւ տագնապներու վրայէն թեթեւօրէն անցնելու դիւրին արժեւորումներն ու մակերեսային դատումներն:

Հայրենիքը կը կառուցուի ինքնաքանդակման լուրջ մտեցումով, ինքնաքանդակման առողջ ոգիով, հարցերը ճիշդ տեսնելու եւ տագնապները համապարփակ ու հայեցակետով ընկելու հաւաքական իմաստութեամբ ու քաջութեամբ: Հայրենիքին առողջ դիմագիծ տուողը, անոր ոգի ու տեսիլք ներարկողը, անոր հզօրութիւնը ապահովողը ժողովուրդն է: Իսկ ժողովուրդին հզօրութիւնը կը կերտուի բարոյական, հոգեւոր ու ազգային արժէքներով, միասնական ոգի ու հայրենիքին ապագային նկատմամբ ունեցած իր խոր հաւատքով:

Շարունակուած Ա. Էջէն

## ՄԻ ՎԱՆՆԱՔ

Այսօր, մտահոգութիւններով ու մտավախութիւններով լեցուն է մեր կեանքը: Միջին Արեւելքի երկիրները, յատկապէս Լիբանանը բռնուած են պատերազմ բուրդ ձգուած կացութեան մը մէջ: Չինոյութեան գործողութիւններ, անձեղ բնակչութեան դէմ վայրագութիւններ, հաւանական մոր պատերազմներու մտատանջութիւններ տագնապալի հոգեվիճակ ստեղծած են, որմէ դուրս գալը անվերջ դարձող կրօնական մը դուրս գալու անհեթեթութեան կը նմանի:

Ներդրումներն ու դժուարութիւնները միշտ ալ եղած են կեանքի մէջ, մասնաւոր, երբ այդ կեանքը ապրուած է յստիմ ճշմարտութեան, արդարութեան եւ սրբութեան: Պէտք է գիտնալ գանձագանութիւն դնել դժուարութեանց միջեւ: ՉՔրիստոս ճանչցողը եւ զԱյն իր կեանքին մէջ ընդունողը, տարբեր մտեցում ունի ներութեանց նկատմամբ: Քրիստոս երանելի նկատուած այն ամօնը, որ արդարութեան, սրբութեան, խաղաղութեան համար չի խուսափիր ներութեանց մատնուել: ՉՔրիստոս ճանչցողը եւ իր կեանքը յարուցողը մարդ է: ՉՔրիստոսի ժայռէ հաւատքին վրայ հաստատող անձը, ներութեանց դիմաց անալոյս կը մնայ: Ինչպէս որ Պօղոս Առաքեալ կ'ըսէ իր կրօնական ներդրումներուն մասին, «Շղթայրճներ, կ'ուզեմ որ գիտնաք՝ թէ ինչ ներութիւն կրեցիք Ասիա անհանգիճ մէջ: Մեր կարողութիւնն այնքան վեր էր բերը, որ գրեթէ ասլոյելու յոյսը կորսնցուցիք: Չզայցիճ որ մահ-

ճի՛շդ է, Հայաստանը տակաւին շուրջ քսան տարիներու անկախութեան փորձառութիւն ունի: Մեր փորձառութիւնը անելի խորացնելու ճամբուն վրայ երբեմն տագնապներու ու փորձութիւններու կրնանք հանդիպիլ: Սակայն, անհանդուրժողական ոգիի նման քանդիչ դրսեւորումներ, բիրտ արարքներով արտայայտուող բեւեռացումներ, նոյն ազգի գաւակներուն միջեւ թշնամական վերաբերումներ անբնական են ու անընդունելի:

Երկրի մը անկախութեան հիմքը ու անոր յառաջդիմութեան գրաւականը անկասկած ժողովրդավարութիւնն է: Ժողովրդավարութիւնը կ'ենթադրէ ազատութիւն. բայց այնպիսի ազատութիւն, որ խարսխուած ըլլայ պատասխանատուութեան ու համարատուութեան սկզբունքներուն վրայ: Ժողովրդավարութիւնը կը պահանջէ տեսակետներու բազմազանութիւն. բայց բազմազանութեան այնպիսի ըմբռնում, որ ազգին եւ հայրենիքին ընդհանրական ու գերագոյն շահերը վեր նկատուին անհատական ու կուսակցական շահերէ: Ժողովրդավարութիւնը կը պարտադրէ քաղաքա-տընտեսական թափանցիկ հարակարգի ստեղծում. բայց այնպիսի համակարգի, որ ընկերութեան կեանքէն ներս ճշդողի ու ճշուողի, հարուստի ու աղքատի, մասնակցողի ու անտեսուողի դասակարգեր չառաջանան:

Ժողովուրդը պետք չէ խաբել, ժողովուրդը պետք չէ կեղեքել. ժողովուրդը պետք է առաջնորդել այնպիսի վիճակներու, որոնք հետեւանքները կրնան դառնալ աղիտալի նոյն ինչեւ ժողովուրդին համար:

Ստեղծուած մտահոգիչ կացութեան դիմաց, բոլորս ալ ցաւեցանք, ընդվզեցանք, տագնապեցանք: Ժամանակն է այլեւս, որ նայինք յառաջ եւ լրջօրէն մտածենք ողբերգութեան հետքերը դարմանելու մասին:

Յեռու պետք է մնալք նոր բեւեռացումներ յառաջացնող գրգռիչ արտայայտութիւններէ, մեր ժողովուրդի գաւակներուն միջեւ ռիս ու ատելութիւն սերմանելու փորձերէ, յաղթական ու յարեւողի, դատապարտեալի ու դատապարտողի մտեցումներէ: Բոլորս ալ նոյն հայրենիքին գաւակներն ենք: Այ՛ս ոգիով իրարու պետք է մօտեանք, որքան ալ տարբեր ըլլան մեր քաղաքական տեսակետները:

Միջազգային համայնքէն ներս Հայաստանի ու հայրենիքի վարկին վերականգնումը անյետաձգելի առաջնահերթութիւնն է մեր համագային այլ առաջնահերթութիւններու շարքին: Յետեւաբար, անցեալի դառն փորձառութիւնը մեզ պետք է մղէ բոլորելու հայրենիքի ու ժողովուրդին հաւաքական շահերուն շուրջ՝ միասնաբար լուծումներ որոնելու մեզ յուզող հիմնահարցերուն ու միասնաբար դիմագրաւելու մեր առջեւ կանգնող մարտահարկները:

Լսենք Առաքեալի պատիւները՝

Ամուր ու առողջ պահենք Աստուծոյ գերագոյն պարգեւը, մեր նահատակներու արիւնքով կընդուած ու մեզի որպէս սրբազան կտակ փոխանցուած ազատութիւնը:

Ազատութիւնը ապրի՛նք ու կիրարկենք հաւատարմութեամբ, պատասխանատուութեամբ ու համարատուութեամբ, որպէսզի այլ տեսակի «ստրկութեան» չմատնուի մեր ժողովուրդը:

Տեսնու մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով, Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնեական ջերմ սիրով կ'ողջունենք Հայաստանի Հանրապետութեան խախտահար Նորին Վսեմութիւն Ռուբէն Զոհարեանը, եւ նորընտիր Լախագահ Նորին Վսեմութիւն Սեթ Սարգսեանը, իրենց մարդկային քաջառողջութիւն, ինչպէս նաեւ ամբողջական յաջողութիւն ի սպաս մեր հայրենիքին հզօրութեան ու սիրելի ժողովուրդին բարօրութեան կատարած իրենց ջանքերուն:

Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք մեր եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներու գահակալները՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորոզմ կըք. Մանուկեանը, եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ կըք. Մուրաֆեանը, իրենց մարդկային եկեղեցականութիւն ու ազգաշէն ծառայութիւններով հարուստ երկար գահակալութիւն:

Հայրական օրհնութեամբ ու սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդները, հոգեւոր դասը, Ազգային Իշխանութիւնները, մեր ժողովուրդի կեանքին մէջ գործող բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները եւ մեր եկեղեցւոյ հաւատացեալները: Կը հայցենք յարուցեալ Փրկչէն, որ առաւել եւս գորացնէ իրենց հաւատքն ու յոյսը, եւ իր Եր